Դ. ՏԱՐԻ ՄԱՐՏ 27 ՇԱԲԱԹ 1899 ԹԻՒ 103

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ
Պուլկարիոյ համար
Տարեկան Ֆրք. 10
Վեցամսեայ » 5
Արտասահման
Տարեկան Ֆրք. 12
Վեցամսեայ » 6
ԿԱՆԽԻԿ




Գրութիւնք ետ չեն տրուիր:

Հասցէ
DIRAN PAPAZIAN
RUE DRAGOMAN
K. STEPAN
BULGARIE) VARNA

# ՇԱԲԱԹԱՀԱՆԴԷՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՇՏԱԿԱՆ

*Եթէ կ'ուզէք «Հայելի»ին մէջ աղուոր երեւնալ,*
*Պարտիք սիրտն եւ ազնիւ դէմք մը ունենալ:*

☞ «Հայելի»ի Բ. տարւոյ թիւերը կազմուած կը վաճառուին 'ի գին 10 ֆրանք, թղթատարի ծախքը խմբագրութեան վրայ ըլլալով:

## ԱԶԳ. ԼՈՒՐԵՐ

Սոֆիայի Արժ. Տ. Արիստակէս քահանայ Փէօլեան՝ Պուլկարիոյ առաջնորդական վիճակին և առաջնորդի մը պէտք ունեցած յատկութեանց վրայ տեղեկագիր մը ղրկած էր 'ի Պատրիարքարան: Կրօնական ժողովը իր վերջին նստին մէջ գոհունակութեամբ կարդացեր է Տէր Հօր տեղեկագիրը և որոշեր է զայն յանձնել Խառն Ժողովոյ ուշադրութեան:

—Պուքրէշէ մեզ կը գրեն թէ, արդարութեան դէմ է առ այժմ Պօթուշանի Տ. Աթանաս քահանային վերագրել Իւթիւճեան սրբազանի մասին չարախօսած ըլլալը, ըստ որում ուրիշ 7—8 պանդուխտ քահանաներ ալ կը գտնուին Ռումանական հողին վրայ, որոնք Սրբազանին հետ առաջուց անձնական հաշիւներ ունին եղեր: Բայց քննութիւնը պէտի հաստատէ թէ ասոնցմէ ո՞րն էր կառավարութեան մօտ այդ չարախօսութիւնը ընողը:

— Ուսումն. խորհրդոյ կողմէ պատրաստուած վերջին վիճակացոյցի մը նայելով, ցարդ Պոլսոյ մէջ գտնուած 40 ազգային վարժարանները կը յաճախեն 4923 երկսեռ ուսանողք, 274 ուսուցիչ և ուսուցչուհիք: Սոյն ազգային վարժարանաց ամսական ծախքն է 77,300 ղրուշ. որուն 48.994ը եկեղեցիներու ընտուկներէն, 23,865ը աշակերտաց թոշակներէն և 4440 ղրուշն ալ շրջաբերութեան հանուած գանձանակներէ կը հոգացուին: Իսկ կառավարական Պոլսոյ և օտար ազգերու պատկանած վարժարանները կը յաճախեն 1550 երկսեռ ուսանող ազգայինք:

— Ամերէկայէ կը գրեն թէ, Սուրիացի խաչագողներ սկսած են Հայ անունով ներկայանալ տեղացիներուն եւ անոնցմէ դրամ շորթել:

—Ամերիկա, Անգլիա, Ֆրանսա, Ռու-

մանիա և ուժիչ Եւրոպեան երկիրներու հայ գաղթականութեանց մէջ 'ի նպաստ Զէյթունի սովելոց հանգանակութիւններ ներկայացումներ ու գոնսէրներ կը սարքուին, իսկ ցաւալի է ըսել թէ Պուլկարիոյ մէջ ցարդ անոնց օրինակին հետեւող քայլ մը չառնուեցաւ։

Մենք սա համոզումը ունինք որ, Պուլկարահայ քաղաքաց մէջ գտնուած տիկնանց մասնախումբերը եթէ ուզեն՝ կրնան այս մասին բան մը ընել։

—Ընթերցասէր անձ մը, որ չուզեր իւր անունը հրապարակել. տեղւոյս տիկնանց Ընթերցարանին կը նուիրէ մէկ տարեկան "Հայելի"։

—Զորեքշաբթի օրը Ռուսչուքէ ըստացանք հետեւեալ երկու հեռագիրները և Քարթ-բօսթալը.

"Պու կիւն մէքթէպիմիզտէ վարժապէտլէրին էօնիւնտէ պիր աշակերտ պիր աշակերտի չագըրմա վուրտու. վուրուլան համթահանէյէ կէօնտէրիլտի. հալի ֆէնա"։

"Պու սապահ մէքթէպտէ դասարանտա վարժապէտլէրին էօնիւնտէ աշակէրտլէրտէն Մկրտիչ Կիւմիւշեան չագըրմա իւչ եէրինտէն վուրտու Յարութիւն Մինասեան աշակէրտի, եարալարը աղըր տըր. համալսարանականլըղա լայըգ վէրիլէն իլիմլէր պունլար տըր"։

"Այս առաւօտ մեր վարժարանին մէջ, ներտողութեան պահուն, երբ պարոն տնօրէնը տակաւին այլկանց վարժարանը կը գտնուէր և ներտողութեան ժամանակ հսկելու պաշտօնն ունեցող ուսուցիչք ալ դուրսը գլուխ գլխի տուած կը զուարճախօսէին եղեր, ուսանողներէն Մ. Կիւմիւշեան և Յ. Մինասեան բանակռուի մը կը բռնուին, որոնց առաջինը պայտիգպանի կամարաձև դմելինը քաշելով, Յարութիւնը բաշկէն, ձեռքէն ու աղդրէն կը վիրաւորէ»։

(Տէր տեսցէ և այց արասցէ)։

---

ԹԱՏԵՐԱԿԱՆ

Յառաջիկայ չորեք. գիշեր տեղւոյս Հայկական Կրթարանի ի նպաստ ներկայացում մը պիտի տրուի Անկէլ Սլավօֆի սրահին մէջ, ըստ յայտագրի՝ խնամօք պատրաստուած։ Խաղն է Վիկթօռ Հիւկօի «Անճէլօ Մալիբյէռի» անուն 4 արարուած թատերգութիւնը եւ «Տիկին Պօնպարտօնէի պանդոկը» անուն խնդածիծաղաշարժ զաւեշտը։

Քաջայոյս ենք թէ կրթասէր ազգայինք իրենց արդիւնաբեր ներկայութեամբը պիտի քաջալերեն սոյն ազգօգուտ ձեռնարկը։

---

## ԱՆԻՐԱՒ ԷՔ

Յայտնի է որ յեղ. կուսակցութեանց ուղղակի պաշտօնական կամ անոնց համակիր անպաշտօն օրգանները երբեք առիթ չեն փախցներ յեղյեղելու և գանգատելու թէ, ուրիշ թերթեր, որոնք իրենց ուղղութիւնը չունին, ժողովուրդը յեղափոխութենէ կը պաղեցնեն և յեղ. ոգին անոր մէջ մարեցնել կը ջանան, յեղափոխականները և իրենց գործերը չարամտութեամբ և անիրաւաբար քննադատելով։

Թէև անկողմնակալ և լուրջ մարդոց համար շատ պարզ բան մըն է թէ, ժողովուրդը յեղափոխականներէ հեռացնողը ոչ թէ այս կամ այն թերթերը, այլ ծանր զեղծումներն ու սխալները եղած են, որոնք երևան եկան յեղափոխական շրջանակներու մէջ. բայց մենք այդ մասին չպիտի ծանրանանք, հարիւրաւոր անգամ արդէն ըսուած բաները կրկնած չըլլալու համար։ Թողունք ատոնք, որոնք

արդէն հանրածանօթ և հինցած են, և որոնց պէտք ալ մնացած չէ հաստատելու համար կուսակցական թերթերու գանգատներու անիրաւութիւնը. քանի որ իբր յեղափոխական ծանօթ մարդիկ կը շարունակեն իրենց գրգռեցուցի՛չ գործերով անպատուաբեր ըլլալ այն կուսակցութեանց, որոնց կը պատկանին, և սատարել յեղափոխականներու վարկը կոտրելու ժողովուրդին աչքէ : Ասոր համար երկու ամենաթարմ փաստեր ունինք, փ. Պոլսոյ վերջին կռիւը և Ռուսճուգի Հնչակեան երկու կուսակցութեանց միջև բացուած բանակռիւը, որ կը կատարուի Թռուցիկ յայտարարութիւններու միջոցաւ:

Երբ վարդապետի մը ննջեցեալի մը ապարօղութեան պիտի մասնակցի չպիտի մասնակցիի խնդիրը կրնայ քարով ու փայտով, սուրով ու ռէվօլվէրով կռուոյն պատճառ ըլլալ եկեղեցւոյ շրջափակին մէջ, և այնպիսի անձերու միջև, որոնք ծանօթ են իբր Դաշնակցական եւ Արմենական, երբ Հնչակեան երկու բաժանումներու քաղաքի մը ճիւղերուն վերաբերող անձեր խնդրոյ մը առթիւ վէճի կը բռնուին, երբ մանաւանդ իրենցմէ մէկը, Նպարբէկեան մասնաճիւղը երկու յայտարարութիւններ կը հանէ, որ միմիայն հայհոյութեան արհեստին վերջին կատարելութեան հասցուած մէկ պատկերը, մէկ գլուխ գործոցն է (*), զարմանալի՞ է ժողովուրդին խրչտիլը արդի յեղափոխականներէն եւ անհիմն ու անտեղի չէ՞ ըսել թէ ոչ-յեղափոխական թերթերն են որ ժողովուրդը կը պաղեցնեն յեղափոխութենէ :

ԾԱՆՕԹ

(*) Տես «Հայելի»ի Ներկայ թուոյն 20րդ երեսը: Ծ. Խ.

---

Այս առաւօտ Պոլսէն առնուած տեղեկութեանց նայելով, անցեալ կիրակի օրը Նէնի գաւառի Ս. Թադէոս և Բարթուղիմէոս եկեղեցւոյն մէջ Վառնացի Տիրացու Գէորգ Ղարիպեան քահանայ ձեռնադրուելով, տէր Սարգիս կոչուեր է :

## ԿԵԱՆՔԻ ԿԵՂԾԻՔՆԵՐԷՆ ԶԳՈՒՇԱՆԱԼՈՒ ԴԱՍ ՄԸ

Զուարթ աշխարհքէն ես այսպէս շուտով
Խաւարեցայ մարայ ցաւով ու վշտով,
Կեանքիս անյարմար վիճակ ընտրեցի
Վառ սրտիս կորովը ինքս մարեցի:

Կը յուզուի սիրտս կուլայ կարտասուէ,
Չի խնդար երբէք՝ դադար չէ ցաւէ,
Հոգիս վշտերի ալեաց մէջ տժգոյն
Կուզէ խեղդուիլ ամենից թաքուն :

Կը տեսնեմ շուրջս խինդ՝ ծիծաղ՝ հրճուանք՝
Իմ կեանքս ինծի կըլլայ միշտ զրկանք .
Ափսոս որ այսպէս իմ գարուն կեանքին,
Ինքս մատնեցի անվերջ տանջանքին :

23 Մարտ 99 ՎԻՇՏՈՒՆԻ
Ռուսճուք

---

## ԲԱՌԱԽԱՂՈՒԹԻՒՆ (*)

Կուգամ շար ի շար
Կ'ուտեմ ժամէ ժամ,
Անունս է շարժում:

Զուգեր ինծի ան
Կարծեմ չունի գութ,
Ընգութ է անգութ:

Մի երախայ Նոր
Մեծնայ որպէս այր,
Կը լինի Նորայր:

Թէ քեզ ընկեր կայ
Ամեն խօսքի տակ
Խօսէ մի կատակ:

Ես ամեն մի ժամ
Կընեմ քեզի կոչ,
Չե՞ս լսեր ժամկոչ:

Կուզե՞ս սովիլ բառ
Ունեցիր մի գիրք
Որ լինի բառգիրք:

(Շարունակելի) ՍԵԽԱՑՕՆ

(*) Նկատեցէք՝ ամեն տուն իր իմաստը և ամեն տողերը որոշ Նշանակութիւն ունին :

# ԵՐԿՈՒ ԿՈՉԵՐ

ԵՒ

## ՀԱՄԱԼ—ԸՄԱՐԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ ՀԱՅՀՈՅՈՒԹԵԱՆՑ

Անցեալ շաբթու, Ռուսճուգի մէջ «Հայրենասէր երիտասարդներ» ստորագրութեամբ կոչ մը հրատարակուած էր, որով կառաջարկուէր քաջարի Զէյթունի դժբաղդ սովելոց համար հանգանակութիւն մը ընել վստահելի եւ հասարակութեան առջեւ հեղինակութիւն ունեցող անձերէ կազմուելիք յանձնախումբերու միջոցաւ և դրամը հասցնել հայապաշտպան Ուէստմինիստրի դուքսին, որ զայն յանձնէ իր նպատակին, այն է Զէյթուն ղրկել։

Ամէնէն կուսակցութիւն չի հոտող այս չնչուք ու անկեղծ կոչը՝ լաւ ընդունելութիւն գտնելու վրայ էր, եւ ահա հակառակ կոչ մ'ալ, «Ռուսճուքի Հնչակեան կուսակցութեան մասնաճիւղ» ստորագրութեամբ յերեւան կ'ելլէր, որ յանուն Զէյթունի հաւաքուելիք դրամին տիրանալու ու անոր մատակարարութեան մուզաքսան առնողի մը պէս, (զի ըսողներ կան թէ, առաջինին անուշ համը բերանին է մնացեր) բացարձակապէս արգելք կը յարուցանէր ու այդ երիտասարդները 57 տեսակ հայհոյութեանց տարափի մը կը բռնէր։

Ցեղ. կուսակցութեան մը վարչութիւնը կազմող այս պարոններուն ի՛նչ տեսակ մարդ ըլլալնին անգամ մ'ալ ժողովուրդին ցոյց տալու համար, անոնց՝ իրենց ազգակից ու արենակից եղբայրներուն ցօնած նոյն հայհոյութեանց բառարանը այբուբենի կարգով հոս կ'արտատպենք։

Անօթի սղուն. Աղբիւս լզուըստող. Անպատկառ. Անամօթ. Ապականաբար. Գաճաճ. Գրպանահատ. Գաղտակծիծ. Դաւաճան. Դատարկապորտ. Զազիր. Զազրելի. Թափթփուք. Թուք ու մուր. Ժահր ծծող. Ժահրալից ներշնչութիւն. Իմաստակ. Լրտես. Լիրբ. Լրտեսի օգնական. Խաչագող. Խնլինք. Կաւատ. Կեղծաժպիտ. Կեղտոտ. Կեղծարար. Ճարպիկ գող. Մանչուկ. Մուրացիկ. Մատնիչ. Մակաբոյծ. Մերուժան. Յայտնի մուրացկան. Նողկալի գործակից. Որովայնահակ. Ոտքի հողեր համբուրող. Ողորմելի. Պնակալէզ. Պոռնկամիտ. Պատրուակեալ մուրացիկ. Ջրտած ուղեղ. Սրճարանի մանկլաւիկ. Սրիկա. Ստորադարչ գործիք. Սինլքոր. Ստորին. Սավըլուկ. Վասակ. Վարձկան. Վիժուկ. Տգեղ դիմակ. Տզրուկ. Ցեխին մէջ որդորսացող. Ցնորամիտ. Փողոցային շառլաթան. Փտտած որդեր. Քստմնելի արարած։

Ստորագրութիւն
(կարմիր մելանով կնիք)
Վարչութիւն Հնչակեան
կուսակցութեան, Ռուսճուքի
մասնաճիւղ.

Բոժ.—Կեցցէ՛, կեցցէ՛, յաւէրժ կեցցէ՛ Նազարբէկեան Վարչութիւն։

# ՄԱՆԵԷԹԻԶՄՕ

Վերջերս 'ի Փ. Պոլիս մէկ քանի պարոններ ու օրիորդներ, իրիկուններ ճաշէն վերջը տեղ մը հաւաքելով, 8 տարեկան Եփիմէ անուն աղջիկ մը մանեթիզմօ կ'ընեն ու հետեւեալ հարցումները անոր ուղղելով կը զբօսնուն եղեր։

— Ըսէ՛ նայինք Եփիմէ, օրիորդ Նունէն ե՞րբ պիտի ամուսնանայ.

— Երբոր մայրիկը մեռնի, ինքը երիտասարդի մը հետ պիտի փախչի։

Ո՜հ — Աղէկ որ Նունէն հոս չէր, շատ պիտի բարկանար։

— Եփիմէ, այս միջոցիս օրիորդ Ցամիկին նշանածը ո՞ւր է և ի՛նչ կ'ընէ։

— Բարիզ կը գտնուի, և պալօնէի ան-

տառին մէջ գնդանի Ֆրանսուհիի մը հետ կը գրօսնու։

Ցասմինէ.— Է՛հ, այս գիշեր աղուոր չի պատասխաներ կոր, անպիտանը.

— Լռեցէք, ես ալ բան մը պիտի հարցնեմ. երեք տարիէ 'ի վեր նշանուած միսիս Պըյըլէր և օրիորդ Քիթըլ երբոր ամուսնանան, քանի՞ զաւակ պիտի ունենան։

— Ամուսնանալնիք չունին որ, զաւակ ալ ունենան։

— Քա ճա՛նըմ. աս իրիկուն ինչո՞ւ ասանկ անհամ պատասխաններ կուտայ կոր.

— Որովհետև այսօրուան ճակատագիրնիդ անհամ կը տեսնէ կոր. չօճուխը ինչ յանցանք ունի. եթէ կ՚ուզէք, անգամ մը ուրիշ հարցումով մը փորձենք տուած պատասխաններուն ճշդութիւնը։

— Այո՛, կանխաւ հրահանգուած ըլլալը ու պէտք եղածին չափ Մանեէթիզմօ եղած ըլլալն ստուգելու համար անգամ մը փորձենք։

— Եփիմէ, ըսէ նայինք, աս մեր միսիս Քիթըլինոսը, որ հիմա հոս ներկայ է, գրպանին մէջ քանի՞ փարայ ունի. (ծիծաղ)

— Տասը սանդիմինց մը։

— Իրա՞ւ է միսիս Քիթըլինոս.

— Օրիո՛րդ, եթէ ասկէ աւելի ունիմ ըսեմ, գրպանդ ցոյց տուր պիտի ըսէք, ուստի պարտաւոր եմ խոստովանիլ թէ այս միջոցիս 10 սանդիմինց մը ունիմ գրպանիս մէջ։

Տարիքոտ կին մը որ անկիւն մը նստած էր, կամաց մը քովի կնոջը — Քուրո՛ւկ, ճէպերնին տասը փարա չունին՝ կարգուելու ալ կելլան։

— Մեր մայմուն իշտահը թախըմ մը աղջիկները թող տեսնան։

— Ըսէ՛ նայինք Եփիմէ, քանի մը ամիսներէ 'ի վեր աղջիկ բնտռող պարոն Գաբա_եուտան ե՞րբ պիտի ամուսնանայ օրիորդ Զըմպաճին հետ։

— Երբոր ձուկը ծառը ելնէ.

(Ընդհանուր ծիծաղ)

— Ես ալ բան մը պիտի հարցնեմ Եւփիմէին։

— Հարցուցէք օրիորդ Ճինթօս.

— Աս մեր օրիորդ Մատնոցին սիրահարը ո՞վ է.

— Այնինչ փողոցի կալանթէաիի խանութպանին կակավուկ թէզկեահտարը.

— Վա՜յ, օրիորդ Մատնոց, «կիզլի կիզլի սէվտալեր աշիքեար օլույօր».

— Սո՛ւտ է, անանկ բան չի կայ, ուսկի՞ց ալ գտաւ անպիտանը. ամենեւին չեմ հաւատար ատոր ըսածներուն.

— Բայց քիչ մը առաջ հաստատեցինք թէ ճշմարիտ պատասխան կուտայ։

— Չէ՛, չեմ հաւատար.

— Կ՚ուզէ՞ք որ նորէն փորձենք։

— (Ձայներ) Այո՛ այո՛, փորձենք որ օրիորդն ալ համոզուի.

— Եւփիմէ՛. աս մեր միսիս Գրաքոսին հագած կրկնոցին աջ գրպանին մէջ այս միջոցիս ինչ կը գտնուի.

— Ճերմակ թաշկինակ մը և պճեղ մը սխտոր.

(Ընդհանուր ծիծաղ)

— Իրա՞ւ է միսիս Գրաքոս.

— Գրպանս ճերմակ թաշկինակ մը ունիմ, բայց պճեղ մը սխտորը ո՞ւսկից հանեց.

— Պրպտեցէ՛ք գրպաննիդ. դուրս դարձուցէք որ տեսնանք։

— Ահաւասիկ թաշկինակս, ահաւասիկ և գըը... պա... նըս, հէ՞. աս ինչ է, ա՛յ սարսափելի, աս սխտորը ո՛վ դրեր է հոս։

Ամենքը— (խնդալով) Հա՛, հա՛, հա՛, վա՜յ միսիս Գրաքոս, նազար չառնելու համար վրադ սխտո՞ր ալ կը պահես կոր.

— Կեցէք եղբայր, որ յիշողութիւնս ամփոփեմ ու աս պճեղին ինչպէս գրպանս մտած ըլլալը գտնեմ։

— Կարկտան չուզեր, միսիս, քովդ ալ մէկը չի մօտեցաւ որ անիկա դրած ըսելով ամբաստանես։

— Ո՛չ, կարկտանի պէտք չունիմ, եւ ահա ատոր համար... (վայրկեան մը մըտածելէ ետքը) հա՛, ճիշդ է. երկու գիշեր առաջ ճաշի իջնելու միջոցին, մայրիկս, որ պահք կը բռնէ, ըսաւ որ Մեծես Քաառուղես

բաժակ մը կ'ուզէ կոր, բայց սխտորնիս հատած է. գնա՛ սա անկիւնի նպարավաճառէն 10 փարայի սխտոր ա՛ռ բեր, ես ալ գացի առի ու ձեռքս բանելը անպատեհ համարելով. գրպանս դրի. կերևի թէ պճեղին մէկը գրպանս է մնացեր:

— Ինչ որ է. խնդիրը Եւփիմէին չիտակ ըսելը կամ չըսելը հաստատելուն վրայ էր. հիմա հասկցա՞ք օրիորդ Մատնոյ:

— Ան չէ ամա, կրնամ դուրսէն ալ մէկուն համար բան մը հարցնել.

— Ինչո՞ւ չէ.

— Ուրեմն սա ռէբիւպլիք գլխարկով պեյազճի միւսիւն, որուն հետ ամուսնանալու համար չորս հինգ թեկնածու օրիորդներ կան եղեր, վերջապէս ատոնցմէ որո՞ւն հետ պիտի ամուսնանայ:

— Անոր քաղաքականութիւնը էյլէնմիշ ըլլալ է. հետևաբար, ամուսնանալիք չունի:

— Կեցցե՛ս Եւփիմէ, ճիշդ գուշակածս հաստատեց.

Անկիւնէն կին մը.— Քա ճանըմ, արթըխ կօգտէ՛, վերջացուցէք:

— Հա՛, կերևի թէ Մաննիկ տուտուին սիրտը նեղացաւ, հարցունենք նայինք թէ այս միջոցին անոր միտքէն ի՛նչ կանցնի կոր.

— Ես միտքէս բան մը անցուցած չունիմ քի...

— Կայնէ նայինք, պիտի հարցունենք. ըսէ՛ Եւփիմէ, Մաննիկ տուտուին միտքէն ի՛նչ կանցնի կոր.

— Բաց աչքով, սա թոռս մէյ մը տեղաւորէի կըսէ կոր:

— Վո՛յ կածակի կաս պիլէքիմ, ինտո՞ր ալ գիտցաւ:

— Է՛հ, դժէշ բան մը չէ եա միտքէդ անցածը. ատանկ բանը ո՛վ չուզեր քուրուկ, տիւշմանինս աղէկ ըլլայ:

— Քա ճանըմ, Կէո՛րգ, արթըխ կ'օգտէ՛ ըսի, վերջ տուէք. ղալմալը չօճուխը (Եւփիմէն) նայեցէք ինչ հալերը կը մտնայ կոր. չէ՞ք մեղքնար. հէքիմը հասկցեր տէ ըսեր է քի՝ էյեր քիչ մըն ալ ադ մանիպիւլիզմին ընեն նէ՝ չօճուխը կը հիւանդնայ.

— Հա եա նավրում, հէմ՝ պօշ տեղը սիրտ կոտրում՝ խօսքեր կը ըսէք կոր. արթըխ էյլէնճէի բան չի դտա՞ք:

Այս խօսքերը՝ պահ մը սրտերնին կոտրած օրիորդներուն ու պարոններուն մխիթարանք համարուելով. «իրաւ, միթէ մարգարէ՞ է ասադջիկը, պօշ տեղը սիրտերնիս թունդ չի հանենք» կըսեն և վերջ կուտան այդ արտառոց ու վտանգաւոր գործողութեան:

ՍՕՒՐՄԱԿ

# ԳԱԲ—ԳԱՁ ՊԻՐ ԱՎՕԳԱԹ

Զօղլարը մալիւմ օլտուղու ուզրէ, հալէա Սթանպօլտա եօթէտէ պէրիտէ Ֆաաղըս գալամը տէնիլէն պիր թագըմ ատամլար պուլունուր, պունլար տահա վէքիւլէթինէ գալդըշարագ, էլլէրինէ կէչիրէպիլտիքլէրի էհալիտէն փարալարը ալտաթըրպ սօյուլմուշ սօղանա չէվիրիրլէր: Պունլարտան պիրիսինին կէչէնլէրտէ ֆաքիր պիր Հայ գատընա գարշը օյնատըղը գարդաշլըղ օյունու պուրատա պիլթաֆսիլ պէյան իտէրէք, նէ՛ տէրէճէ ինսաֆսըզ հարաքէթտէ պուլունտուղլարը՝ օդույան զէվաթա պէյան իտէճէյիզ.

Մէրդում ևալանճը ավօգաթ՝ սապահլայըն էրքէն, պիր խան իչինտէ թութմուշ օլտուղու օտասընա կիրտիկի վագըթ, քէնտի ևարտըմճըսը վէ տահա տօղրուսու՝ ևարտաղը օլան արգադաշընա սուալ իտէր.

— Քիմսէ կէլտի կիթտի՞ մի.

— Տահա կէլէն կիտէն օլմատը, սաաթ տէօրթտէ չուևալ թիւճարը Նիգօլաքի կէլէճէք. Նիւքլիւճէ պիր չէյ տիր, էյի տավրան. Պիտայէթտէ իլամը ևէմիշ. պէն դանտըրտըմ քի «պի-

զիմ էֆէնտի պու իշի խալթինաֆ լոտէր վէ մութլագ գազանըր ամա, իշի չօգ ուզըր, պիլմէմ քի խումթիւնէ ալը՞ր մը տէտիմ:

— Հելէ կէլսին տէ օնու եօլունա գօրուզ . . . վա՜յ, պու կիւն չու Նըրմէնի գարըըը տա կէլէճէք, օնու նա՞սըլ սավմալը.

— Հիչ վայիթմէ էյթմէ, պէն օնա տէտիմ քի պէշ լիրա լազըմ, պու բարա վէրիլմէտէն իշ պիթմէյէճէք:

— Նէ՞ տէտի.

— Պիր չիֆթ չիչէք մուճէվհէր էյնէսի վար ըմըշ, օնու րէհին էտիպ բարա պուլուրսա կէլէճէք:

— Պօշ պուլունմուշսըն, տէմէլի իտին քի, պէնիմ աաաըըմ վար, սէն ինյէլէրի պուրայա կէթիր. վէրէճէք ֆայըզըն տա պիզ ալըր ըտըգ:

— Օրասը տուշունէմէտիմ:

Պու արա՝ խումթիւ պաշը օլտուգճա տուզկիւն վէ գըրգ եաշըընա եագըն պիր զաթ իչէրի կիրէր.

Գաբգաչըն արգասըաշը — Վա՛յ քիրիյէ Նիգօլաքի, պույուրուն. (գաբգաչա խիթարյեն) իշթէ էֆէնտիմ, Թիւճարը մութէպէրանտէն մուսիւ Նիգօլաքի:

— Բէք ալէա, պույուրուն օթուրուն, չու էլիմտէքի լայիհայը պիթիրէյիմ տէ գօնուշուրուզ:

— Գամ՝թէ տուլհասա, աֆէտէրսի, յունքի թուրքյազ պիլմէմ յօգ յօգ:

— Զարար եօգ մուսիւ, պիզիմ էֆէնտի ալ չօգ Րումճատա գարըշտըրըր:

Պէրիտէ սախթէ ափօգաթ՝ կիւյա պիր իշ խոսթինտէ տիր կիպի, եազըխանէ իւղէրինտէ պուլունան քիթապլարը գարըշտըրըրգ պիր թարաֆա գօյտուգտան սօնրա՝ գօնուշմազա պաշլար:

— Էյ էֆէնտիմ, չիմտի սէօյլէյին պագալըմ, տավանըզ նէտի՞ն իպարէթ տիր:

— Պէն եազտիմ Օտէսսա 25 ֆուցու վոլթիրօ. . . :

— Վոլթիրօ տէտիկինիզ նէ՞ օլույօր.

— Վոլթիրօ . . . նա, պու նասըն տէրլէր . . . սա՛ղ աճագ . . .

— Սաեաղը տէմէք իսթէյօր էֆէնտի:

— Պրավօ՛, սաեաղըգ . . . թէօսբանտօն, մալ կէլմիա, մա պէն գօնթրաթօ վար տիր նէ վագիթ մալ կէլէճէք 1550 լիրա նէթօ վէրէճէյիմու:

— Աղնատըմ, մալըն թէսլիմինտէ պէտէլինի թէէտիյէ իտէճէքմիշսին:

— Պրավօ վէրտիմ 1000 լիրա քէ հալթա բէնտաքօշիւ բէնինտա:

— Տուր աճէլէ իթմէ, քէհեաթ աբէտիյէ՞ մի գօշմուշ:

— Օհի պըրէ տըրըֆէ, սանքիմ 550 լիրա իցին հաբտիմ պիր պօնօ եիւմի պիր կիւն իցին:

— Աղնաշըլտը. պին լիրասընը վէրմիշսինիզ 550 լիրասը իշլիւն տախի 21 կիւնտէն էօտէնմէք իւզըրէ պիր պօնօ վէրմիշին:

— Պրավօ, ֆուցուլարի մակազխտէ կէթիրտիմ. սօղրամա պագալում, մալ պօզուլմիա, պը; անան ամծի, պապան պամծի, ալ կէրի պու մալ, տէյօրու ալմազ. պէն տէ լէզօ տէն բլէրօնէ էնան պարա:

— Տէմէք մալը անպարա էնտիրիյօրսըն:

— Եօգ անպար, տէրում վէրմէյէծէխմու, պու պօնօսի պանա հաբմիս պիր արծու խալ. կիտէրիզ Թիծարէթ մահկէմէսինէ, օրատա պանա տէմիսլէր, նի՞ցին բրօթէսթօ հաբմատի. տէրում պիլմէզտիմ քէ վոլթիրօ ֆուցուլար պօզուգ. անլամիալար պանա, իլամ հաբմիալար քէ 550 լիրասի վէրէյում:

— Եանըլը՛շ, էֆէնտիմ, եանըլը՛շ, էվէլա Գանունը Թիճարէթին 132ինճի մատտէսի սարահէթէն տէր քի, մէտհուն՝ պօնօսու վատէսինտէ 24 սաաթտան նիհայէթ 24 կիւնէ գատար բրօթէսթօ էթմէլի, էթմէզսէ հալտէ մէտուլ օլամազ տային:

— Մա պու քի տավլա ացմիս, պէնիմ տայիմ տէյիլ տիր:

— Աղնայօրըմ ա՛ մուրվէթլիմ, շիմտի պու տավա հէր հալտէ գաղանըր. խաթինաֆըն մուտատէթի կէչմի՞շ մի տիր:

— Թուրքցաղ աղնամամ:

— Գա՞չ կիւն օլտու իլամ օլալը:

— Նա պու բէմթի քի ցըքմիս:

— Էօյլէ օլտուղու հալտէ խալթինաֆ իտէրիզ. օ տէյիլ ամա մալ տուրույօ՞ր մը.

— Էվէթ, հէ՞ըսի մակազխտէ տիր:

(Տէվամի) ԹՈՄԹՈՄ

# ԹԱՏՐՈՆ ԱՆԿԵԼ ՍԼԱՎՕՖ

1899 *Մարտ 31 Չորեքշաբթի գիշեր ժամ 9*

*(Ներկայացումն Տաճկերէն Լեզուաւ)*

ԽՆԱՄՕՔ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ

Ի ՆՊԱՍՏ

## ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱՐԱՆԻ

# ԱՆՃԷԼՕ ՄԱԼԻԲԻԷՌԻ

ԿԱՄ

ՊԱՏՈՒԱՑԻ ԲՌՆԱՒՈՐԸ

*Բարոյալից Թատերախաղ չորս վարագոյրով*

ՀԵՂԻՆԱԿ ՎԻԿԹՈՐ ՀԻՒԿՕ

ԱՆՁԻՆՔ

| | |
|---|---|
| Անճէլօ Մալիբիէռի, դատաւոր | Պ. Կ. Պալճեան |
| Ռօտօլֆօ, Վենետիկցի ազնուական մը | „ Ս. Օմբատ |
| Օմօտէյ, տանից ժողովոյն մէկ լրտեսը | „ Վ. Որդէկ |
| Անաֆէսթօ Կալիօֆա Վիչէնցիացի | „ Կ. Կարպիս |
| Տաֆնէ, սենեկապան մը | „ Տ. Սիրուն |
| Տէր Գահերէցը | „ Ո. Վրդանէս |
| Երէց մը | „ Գ. Արշակ |
| Բարապան մը | „ Ա. Արտաշ |
| Թիզպէ, դերասանուհի մը | Տկ. Պ. Ֆասուլեաճեան |
| Քաթէրինա Պրակատինի, դատաւորին կինը | „ Ա. Պէրճիկ |
| Րէճինելլա, սպասուհի մը | „ Պ. Ֆ. |

*Բարապանք. Ջինուորք.*

## ՏԻԿԻՆ ՊՕՆՊԱՐՏՕՆԷԻ ՊԱՆԴՈԿԸ

*Ծիծաղաշարժ Զաւեշտ 1 արար.*

ԳԻՆԵՐԸ.— Օթեակք ըստ կամս. Ա. կարգ 4 ֆր. Բ. կարգ 3 Գ. կարգ 2. Կալըրի 1 ֆր.